

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտների, պորտլանդցեմենտային կլինկերի ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

1) 1-ին կետում «Պորտլանդցեմենտ 2523» բառերը փոխարինել «Պորտլանդցեմենտ 2523 10 000 0, 2523 21 000 0, 2523 29 000 0, 2523 30 000 0, 2523 90 000 0» բառերով.

2) 3-րդ բաժնի վերնագրում «Շուկա մուտք գործելու պայմանները» բառերը փոխարինել «Շուկայահանմանը ներկայացվող պահանջները» բառերով.

3) 5-րդ կետում «պորտլանդցեմենտային կլինկերի» բառերից հետո լրացնել «արտադրությունը, փոխադրումը և» բառերով.

4) N 2 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ N 2

Ամրու	Ծռման ամրու Սեղմման ամրությունը, ՄՊա, օր	Կապակցումը	Ծս
թյան դասը	թյունը 28	հաստնությամբ	հա

օրական հասոՎաղ ամրություն լնացմամբ,		Ստանդարտ ամրություն		Ֆերջ, ժամ, ոչ		Սկիզբ, րոպե, Ոչ շուտ		փո
ՄՊա, ոչ պակաս	2 օրա կան, Ոչ պակաս	7 օրա կան, Ոչ պակաս	28 օրական ոչ պա կաս	ոչ ավելի				կո
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
22.5 N	-	-	11.0	22.5	42.5			
32.5 N	5.5	-	16.0	32.5	52.5	75	10	
32.5 R	5.5	10.0	-					
42.5 N	6.0	10.0	-	42.5	62.5	60	10	
42.5 R	6.0	20.0	-					10
52.5 N	6.5	20.0	-	52.5	-	45	10	
52.5 R	6.5	30.0	-					
Ցեմենտի աղացվածքի մանրությունը ըստ N 008 մաղի վրայի մնացորդի, %, ոչ ավել								15
Ցեմենտի աղացվածքի մանրությունը ըստ տեսակարար մակերեսի, սմ ² /գ								28

».

5) 15-րդ կետում «ԳՕՍՍ 31108-2003» բառերը փոխարինել «ԳՕՍՍ 31108» բառերով.

6) 17-րդ կետում «և պահման» բառերը փոխարինել «, իրացման և պահման» բառերով.

7). 30 - 33-րդ և 35-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

8). 39-րդ կետում « և այլ» բառերից առաջ լրացնել «օրենքներով» բառը.

9). 11-րդ բաժնում տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը լրացնել հետևյալ տողերով`

«

ԳՕՍՍ 30515 Ցեմենտներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 31108 Ցեմենտներ համաշխարհային. Տեխնիկական պայմաններ

»:

- Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին` սույն որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկամսյա ժամկետում ապահովել որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջների կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկի հրապարակումը:
- Սույն կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 180-երորդ օրը: